ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/18» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «07» հոկտեմբերի 2025թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարար

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Նիստից բացակայում էր՝

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տեղեկատվություն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունից 2025 թվականի հոկտեմբերի 06-ին ստացված N 03/26-1/22380-2025 գրության և «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/18» ծածկագրով գնման ընթացակարգը 48-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ.

2025 թվականի հոկտեմբերի 06-ին ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացվել է N 03/26-1/22380-2025 գրությունը (այսուհետ՝ նաև Գրություն) (կցվում է), որում նշված է, որ 30/09/2025թ. ժամը 15:50:43-ից ժամը 15:52:43-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային աճուրդների համակարգում առաջացած տեխնիկական խնդրով պայմանավորված՝ խոչընդոտվել է նշված ժամանակահատվածում անցկացվելիք աճուրդների բնականոն ընթացքը: Գրությանը կից ներկայացված է ըստ չափաբաժինների խափանված աճուրդների ցանկը, որում ներառված է նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/18» ծածկագրով գնման ընթացակարգի 48-րդ չափաբաժինը:

Միաժամանակ Գրությամբ հայտնվել է, որ ՀՀ կառավարության 02/05/2019թ. N 516-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված գնման ընթացակարգը (տվյալ չափաբաժինը) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա պատվիրատուն հայտարարում է չկայացած, եթե տվյալ գնման ընթացակարգի շրջանակում սահմանված հայտերը ներկայացնելու վերջանաժամկետը լրանալու պահի դրությամբ համակարգը խափանված է:

Վերոգրյալով պայմանավորված՝ հանձնաժողովը որոշեց.

- հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության N 03/26-1/22380-2025 գրությունը՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/18» ծածկագրով գնման ընթացակարգը 48-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա,
- հաստատել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/18» ծածկագրով գնման ընթացակարգը 48-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը (կցվում է):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի մուտքագրման (լրացման) մասին.

ՍԴԴ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի, «Կոմուս» ՍՊԸ-ի, Սմարթլայն ՍՊԸ-ի, Էմ Սի Էս Կովկաս ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) են առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի (հայտերում առկա փաստաթղթերի, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի)՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

3.1. ՍԴԴ ԳՐՈՒՊ ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան (դիմում հայտարարության 2)-րդ կետի երրորդ պարբերությամբ նախատեսված աղյուսակում նշված տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ հրավերով հիշյալ աղյուսակի լրացման պահանջ սահմանված չէ),
- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,
- 1-ին, 5-րդ, 8-րդ, 27-րդ, 35-րդ, 39-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին,
- 28-րդ, 29-րդ, 30-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝

• 28-րդ չափաբաժնով նախատեսված՝ A5 ձևաչափի նամակի ծրարի մասով հրավերով սահմանված է՝ «չափսերը՝ 176 x 250մմ (շեղումը +- 2%)», սակայն մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում նշված է՝ «չափսերը՝ 178 x 254մմ (շեղումը +- 2%)», ինչը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջին: Այսինքն՝ հրավերով +- 2% շեղումը

նախատեսված է A5 ձևաչափի նամակի ծրարի հրավերով սահմանված չափսերի նկատմամբ, այն դեպքում, երբ մասնակցի կողմից ներկայացվել է +- 2% շեղում՝ հիշյալ ծրարի մասնակցի կողմից առաջարկվող չափսերի նկատմամբ,

- 29-րդ չափաբաժնով նախատեսված՝ A4 ձևաչափի նամակի ծրարի մասով հրավերով սահմանված է՝ «չափսերը՝ 220 x 325մմ (շեղում +- 2%)», սակայն մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում նշված է՝ «չափսերը՝ 229 x 324մմ (շեղում +- 2%)», ինչը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին: Այսինքն՝ մասնակցի կողմից առաջարկվող A4 ձևաչափի նամակի ծրարի 229մմ չափսը գերազանցում է հրավերով սահմանված (թույլատրելի) շեղման տոկոսը, ինչպես նաև հրավերով +- 2% շեղումը նախատեսված է A4 ձևաչափի նամակի ծրարի հրավերով սահմանված չափսերի նկատմամբ, այն դեպքում, երբ մասնակցի կողմից ներկայացվել է +- 2% շեղում՝ հիշյալ ծրարի մասնակցի կողմից առաջարկվող չափսերի նկատմամբ,
- 30-րդ չափաբաժնով նախատեսված՝ A3 ձևաչափի նամակի ծրարի մասով հրավերով սահմանված է՝ «Ծրար՝ 306 x 408մմ (շեղում +- 2%) չափսերով», սակայն մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում նշված է՝ «Ծրար՝ 305 x 405մմ (շեղում +- 2%) չափսերով», ինչը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջին: Այսինքն՝ հրավերով +- 2% շեղումը նախատեսված է A3 ձևաչափի նամակի ծրարի հրավերով սահմանված չափսերի նկատմամբ, այն դեպքում, երբ մասնակցի կողմից ներկայացվել է +- 2% շեղում՝ հիշյալ ծրարի մասնակցի կողմից առաջարկվող չափսերի նկատմամբ:

3.2. «Կոմուս» ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,
- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,
- 3-րդ, 6-րդ, 14-րդ, 21-րդ, 34-րդ, 46-րդ, 47-րդ, 49-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին և գնահատվում են բավարար:

3.3. Սմարթլայն ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան (դիմում-հայտարարության 2)-րդ կետի երրորդ պարբերությամբ նախատեսված աղյուսակում նշված տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ հրավերով հիշյալ աղյուսակի լրացման պահանջ սահմանված չէ) և գնահատվում է բավարար,
- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,
- 16-րդ, 17-րդ, 18-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին և գնահատվում են բավարար:

3.4. Էմ Սի Էս Կովկաս ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին

համապատասխան (դիմում հայտարարության 2)-րդ կետի երրորդ պարբերությամբ նախատեսված աղյուսակում նշված տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ հրավերով հիշյալ աղյուսակի լրացման պահանջ սահմանված չէ) և գնահատվում է բավարար,

- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,

- 31-րդ, 32-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին և գնահատվում են բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2025թ. հոկտեմբերի 09-ին, ժամը 11:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/18» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.11-րդ կետի պահանջներով՝ **ՍԴԴ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի** հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով ծանուցել հիշյալ մասնակցին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **հոկտեմբերի 08-ը ներառյալ** Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Նորայր Աղամալյան

_____ Անդրանիկ Աբգարյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

N 03/26-1/22380-2025

ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆԵՐԻՆ (ըստ ցուցակի)

Հայտնում ենք, որ 30/09/2025թ. ժամը 15:50:43-ից ժամը 15:52:43-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային աճուրդների համակարգում առաջացած տեխնիկական խնդրով պայմանավորված՝ խոչընդոտվել է նշված ժամանակահատվածում անցկացվելիք աճուրդների բնականոն ընթացքը (ցանկը կցվում է):

Միաժամանակ, հայտնում ենք, որ ՀՀ կառավարության 02/05/2019թ. N 516-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված գնման ընթացակարգը (տվյալ չափաբաժինը) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա պատվիրատուն հայտարարում է չկայացած, եթե տվյալ գնման ընթացակարգի շրջանակում սահմանված հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալու պահի դրությամբ համակարգը խափանված է:

Առդիր՝ 1 ֆայլ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

Ստորագրող
ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ
2003930574

X

Signed by: AVANESYAN AVAG 2003930574

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՄՈՒՏՔ N Մ-16568
ԱՄՍԱԹԻՎ 061025

Կատարող՝ Նարեկ Մուրադյան, հեռ. 011800600 (1-1-2)
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Մելիք-Ադամյան փող. 1, հեռ. (+374 11) 800002, www.minfin.am

	Տեղեկատվություն			
	30/09/2025թ.ժամը 15:50:43-ից մինչև ժամը 15:52:43-ն ընկած ժամանակահատվածում խափանված աճուրդների վերաբերյալ՝ ըստ չափաբաժինների			
N	**Պատվիրատու**	**Ծածկագիր**	**Աճուրդ**	**Չկայացած չափաբաժին**
1	Ապարանի համայնքապետարան	ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-101/25	30/09/2025թ ժամը 15:30-ից 16:00	1
2	Գավառի քաղաքապետարան	ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/25	30/09/2025թ ժամը 15:30-ից 16:00	1
3	ՀՀ կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարություն	ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/165	30/09/2025թ ժամը 15:30-ից 16:00	1, 2, 3
4	«Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	ՍՄՍԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/06	30/09/2025թ ժամը 15:40-ից 16:10	6
5	Դատական դեպարտամենտ	ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/18	30/09/2025թ ժամը 15:30-ից 16:00	48

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

Ընթացակարգի ծածկագիրը՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/18»

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար գրասենյակային ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/18» ծածկագրով գնման ընթացակարգը 48-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին տեղեկատվությունը՝

Չափաբաժնի համար	**Գնման առարկայի համառոտ նկարագրություն**	**Գնման ընթացակարգի մասնակիցների անվանումները՝այդպիսիք լինելու դեպքում**	**Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն՝"Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի** /ընդգծել համապատասխան տողը/	**Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն**
48	Ֆլեշ հիշողության սարք, 32GB, USB ինտերֆեյսը՝ առնվազն USB 2.0: Ապրանքները պետք է լինեն չօգտագործված և փաթեթավորված: Ապրանքների տեղափոխումն ու բեռնաթափումը Գնորդի պահեստ իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին, նախապես Գնորդի հետ համաձայնեցնելով մատակարարման կոնկրետ հասցեն:	Էմ Սի Էս Կովկաս ՍՊԸ ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ Ալֆա-Էտալոն ՍՊԸ Էյչ Գրուպ ՍՊԸ Սմարթլայն ՍՊԸ «Կոմուս» ՍՊԸ Լուսիկ Խաչատրյան Նիկալայի ԱՁ	1-ին կետի 2-րդ կետի 3-րդ կետի **4-րդ կետի**	Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության N 03/26-1/22380-2025 գրությունը՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/18» ծածկագրով գնման ընթացակարգը 48-րդ չափաբաժնի մասով հայտարարվել է չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/18» ծածկագրով գնումների համակարգող Գայանե Դադիվանյանին:

Հեռախոս՝ **010511783**:

Էլեկտրանային փոստ՝ **ddgnumner@court.am**:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**